ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ havanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22-ը նոյեմբերի, 2016թ., N21

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 22.11.2016Թ. ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 22.11.2016թ. թիվ 08 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ գյուղական համայնքի տեղական տուրքերի և վճարների 2017 թ. դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ գյուղական համայնքի Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների 2017թ. դրույքաչափերը սահմանելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ գյուղական համայնքի դեկավարի՝ 2017թ. վարձատրության չափը որոշելու և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2017թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4.Հայանիստ համայնքի 2016թ. վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝7 Դեմ՝0 Ձեռնպահ՝0

1. Ալեքսանյան Ռազմիկ կողմ
2. Բեգլարյան Համլետ կողմ
3. Գաբրիելյան Արմեն կողմ
4. Գևորգյան Սարգիս կողմ
5. Կատանյան Լևոն կողմ
6. Հարությունյան Իրինա կողմ
7.Մկրտչյան Գեորգի կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

22.11.2016թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ havanist.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը նոյեմբերի, 2016թ., N22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 Թ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ *ավագանին որոշում է՝*

Սահմանել Հայանիստ համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերը, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել

1) Հիմնական օբյեկտների համար՝

ա. Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

բ.Սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բբ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բգ. 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բդ. 3001 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

2) Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական աուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի և ալկոհոլային վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5.Համայնքի տարածքում՝

1)Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնակտն կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ 200.000 դրամ:

3)Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 40.000 դրամ:

4) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա)հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 2500 դրամ.

բ) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ.

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24 ⁰⁰ – ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկաների համար՝ 25.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 750.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար ՝ 250.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ.

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին զովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին զովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին զովազդի համար՝ 700 դրամ.

4) դատարկ զովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2.000 դրամ:

9.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 70.000 դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5.000 դրամ:

11.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50.000 դրամ:

12.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5.000 դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3.000 դրամ:

14.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 2.000 դրամ:

15.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության վճար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:

16.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել՝ 2.000 դրամ:

17.1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:

18.Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:

19.Ընթացիկ տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:

20.Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել առաջատար մասնագետի վրա:

21.Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝7 Դեմ՝0 Ձեռնպահ՝0

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գաբրիելյան Արմեն
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

22.11.2016թ.

գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԱՐՈՒԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ havanist_ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22-ը նոյեմբերի, 2016թ., N23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՄՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԾՆՈՂԱԿՄՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2017Թ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով. ավագանին որոշում է՝

Հաստատել Հայանիստ գյուղական համայնքի մսուր-մանկապարտեզի ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող ծնողական վճարի՝ 2017 թվականի դրույքաչափը՝ 5000 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝7 Դեմ՝0 Ձեռնպահ՝0

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գաբրիելյան Արմեն
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ
22.11.2016թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.avagani@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
22-ը նոյեմբերի, 2016թ., N24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2017Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017Թ. ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 26-րդ կետի պահանջներով. *ավագանին որոշում է*

1.Հաստատել Արարատի մարզի Հայանիստ գյուղական համայնքի ղեկավարի 2017թ. վարձատրության չափը և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2.Հաստատել Հայանիստի Մսուր-մանկապտրտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2017 թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝7 Դեմ՝0 Չեզոքպահ՝0

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գաբրիելյան Արմեն
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ.ՍԱՐԳՍՅԱՆ
22.11.2016թ.
գ. Հայանիստ

Հավելված՝ 1
Հայանիստի գրավոր կամ համայնքի ավագանու՝
2016 թվականի նոյեմբերի 22-ի
N 24-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՀԱՅԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՄԿԻՑՆԵՐԻ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 11:
2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱԻԱՎՈՐԸ	ԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ *(՝՝՝ դրամ)*
1.	Համայնքի ղեկավար		272.000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	198.000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	198.000
4.	Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	175.000
5.	Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	137.000
6.	Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/	1	137.000
7.	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	124.000
8.	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	123.000
	ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
9.	Հավաքարար	1	73.000
10.	Պահակ՝ գիշերային	1	113.500
11.	Վարորդ	1	80.000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՄԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 2
Հայանիստի գյուղական համայնքի ավագանու՝
2016 թվականի նոյեմբերի 22-ի
N 24-Ն որոշման

ՀԱՅԱՆԻՍՏԻ ԱՄՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՝ 9:

2.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ		
1.	Մանկապարտեզի տնօրեն	1	142.200
2.	Մանկապարտեզի դաստիարակ	1(0.5)	78.000
3.	Մանկապարտեզի դաստիարակ	1(0.5)	73.000
4.	Երաժշտության դաստիարակ	1(0.5)	78.000
5.	Մանկապարտեզի հաշվապահ	1(0.5)	85.000
6.	Մանկապարտեզի դաստիարակի օգնական	1	73.000
7.	Մանկապարտեզի խոհարար	1	73.000
8.	Մանկապարտեզի գիշերային պահակ	1	77.300
9.	Լվացարար	1	73.000

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ա Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01.էլ.փոստ havanist.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22-ը նոյեմբերի, 2016թ., N25-Ն

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ *ավագանին որոշում է*

Հաստատել Հայանիստ համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի փոփոխությունները.

1.Վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխություն.

1) 1.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.

4241 հոդվածին ավելացնել 300.000 (երեք հարյուր հազար) դրամ և պլանը հաստատել 200.000 (երկու հարյուր հազար) դրամ:

2) 10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ.

4729 հոդվածին ավելացնել 300.000 (երեք հարյուր հազար) դրամ և պլանը հաստատել 1.450.000 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝7 Դեմ՝0 Ձեռնպահ՝0

1. Ալեքսանյան Ռազմիկ կողմ
2. Բեգլարյան Համլետ կողմ
3. Գաբրիելյան Արմեն կողմ
4. Գևորգյան Սարգիս կողմ
5. Կատանյան Լևոն կողմ
6. Հարությունյան Իրինա կողմ
7.Մկրտչյան Գեորգի կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԿԻՍՅԱՆ

22.11.2016թ.

գ. Հայանիստ